

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱ

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴԱՄԱՆ ՈՐՈՇ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Նաիրա Մկրյան

Երևանի պետական համալսարան

Հոդվածում դիտարկվում է օտար լեզուների բուհական դասավանդման մեջ կիրառվող մեթոդների և մոտեցումների վերանայման և նորացման անհրաժեշտության հարցը: Այսօր աշխատաշուկայում պահանջարկ կա այնպիսի մասնագետների, որոնք ոչ միայն տիրապետում են լեզվական հարուստ գիտելիքների, այլև՝ հաղորդակցական հմտությունների: Այստեղից առաջանում է բուհական դասավանդման մեջ լայնորեն կիրառվող և բավականին լավ արդյունքներ ապահովող դասական մեթոդը հաղորդակցական մոտեցումների հետ համակցելու:

Բանալի բառեր. քերականական-քարզմանական (դասական) մեթոդ, հաղորդակցական մեթոդ, մշակութաբանական մոտեցում, հաղորդակցական կարողություններ, իրադրային վարժություններ:

Ներածություն

Այսօր, արագ զարգացող տեխնոլոգիաների, նոր հասարակական-քաղաքական իրողությունների ժամանակաշրջանում, առաջ են գալիս օտար լեզուների տիրապետմանը ներկայացվող նոր պահանջներ, որոնք ինքնին ենթադրում են նոր մոտեցումներ օտար լեզվի դասավանդմանն ընդհանուր առմամբ և մասնավորապես՝ բուհում: Ամենատարբեր մասնագիտությունների տեր մարդկանց օտար լեզուն անհրաժեշտ է որպես մասնագիտական աճ ապահովող գործիք: Ըստ որում, եթե 20-րդ դարի կեսերին օտար լեզուն անհրաժեշտ էր որպես մասնագիտական գրականությունից օգտվելու միջոց (հասկանալի է, որ գիտության և տեխնիկայի զանազան ոլորտներին վերաբերող գրականությունն իր ամբողջ ծավալով հնարավոր չէր կարդալ թարգմանաբար), ապա այսօր դրան ավելացել է միջանձնային շփումների հնարավորությունը և անհրաժեշտությունը: Այս համատեքստում օտար լեզվի դասավանդման մեթոդներն, անշուշտ, շտկման և նորացման կարիք ունեն, քանի որ լեզվի ուսուցումը դառնում է կիրառական՝ ի տարբերություն նախկին տեսական և վերացական մոտեցումների:

Օտար լեզվի դասավանդման դասական մեթոդը

Օտար լեզվի դասավանդման մեջ կիրառվող ամենահին, ավանդական մեթոդն այսպես կոչված քերականական-թարգմանական (դասական) մեթոդն է, որի հիմքում ընկած է լեզվի խոր և համակողմանի իմացությունը: Այս մեթոդը ենթադրում է (մասնավորապես՝ հունանիտար բուհերում կամ լեզվական ֆակուլտետներում) քերականական կանոնների և սահմանումների սերտում, ծավալուն բառապաշարի յուրացում, տեքստերի թարգմանություն, վերարտադրում և այլն: Լարսեն-Ֆրիմանը, համակարգելով դասական մեթոդի սկզբունքները, դրանք ներկայացնում է հետևյալ կերպ (Larsen-Freeman 1991:31):

- շեշտը դրվում է գրավոր խոսքի և թարգմանության վրա,
- լավ սովորողը հաջողությամբ թարգմանում է օտար լեզվից մայրենի լեզու և հակառակը, սակայն դժվարանում է բանավոր հաղորդակցվել,
- ընթերցանությունը և գրելը լեզվական հիմնական հմտություններն են,
- հաղորդակցությունը հիմնականում սովորողների և դասավանդողի միջև է,
- սովորողները պետք է սերտեն քերականական կանոններ, այդպիսով ձեռք բերած գիտելիքները կիրառելով համապատասխան վարժություններում,
- սովորողները յուրացնում են լեզվի հարացույցերը,
- դասավանդման հիմնական միավորը նախադասությունն է,
- օտար լեզուն մատուցվում է մայրենիի հետ համեմատության մեջ:

Նշված մոտեցումները, թերևս, կարող են որոշ քննադատության առիթ տալ: Այսպես՝ Ստերնը, անդրադառնալով դասական մեթոդի թերություններին, նշում է հետևյալը. ա) նյութերը տրվում են գրական երկերից, որոնց բառապաշարը հաճախ հնացած է, բ) քերականությունը տրվում է խրթին կանոնների, կետերի և ենթակետերի ձևով, որոնք հաճախ հեռու են իրական խոսքում գործածվող կառույցներից: Այս իրողությունը դժվարացնում է սովորողների կողմից օտար լեզվի քերականության ընկալումը և, որ ամենակարևորն է, դրանց գործածությունը խոսքում: գ) ավելի շատ տեղ է տրվում ձևաբանության, քան՝ շարահյուսության ուսուցմանը, միչդեռ վերջինն առավել կարևոր է խոսքի հմտություններ ձևավորելու համար (Stern 1983:453):

Այս ամենով հանդերձ, կարծում ենք՝ դասական մեթոդի անառարկելի առավելությունն այն է, որ դասավանդումը հիմնվում է երկու լեզուների՝ օտար լեզվի և մայրենիի վրա՝ մի բան, որ այսօր լայն տարածում գտած հաղորդակցական մեթոդը բացառում է: Չի կարելի ժխտել այն իրողությունը, որ մայրենի լեզուն իր ուրույն տեղն ունի օտար լեզուների դասավանդման գործընթացում: Դրա հիմնական պատճառը սովորողների գիտակցության մեջ մայրենիի անխուսափելի գերակայությունն է և օտար լեզվի ոչ լիարժեք իմացությունը: Անհրաժեշտ է ոչ թե մայրենի լեզուն բացառել օտար լեզվի դասավանդման գոր-

ծընթացից, այլ հակառակը՝ այն ճիշտ օգտագործել առավել լիարժեք և մնալուն գիտելիքներ ձևավորելու համար:

Դասական մեթոդն, անշուշտ, տասնամյակներ շարունակ տալիս էր բավականին լավ արդյունքներ: Բուհերի շրջանավարտները տիրապետում էին հիմնավոր քերականական գիտելիքների և ծավալուն բառապաշարի: Սակայն այսօր, լեզվի տեղեկատվական գործառույթից բացի, անհրաժեշտ է նրա հաղորդակցական գործառույթի ապահովումը, և օտար լեզուների իմացությանը ներկայացվող պահանջներն էապես փոխվել են: Լեզվական բուհերի շրջանավարտները միշտ չէ, որ աշխատում են որպես ուսուցիչներ կամ թարգմանիչներ: Այսօր օտար լեզվի իմացությունը պահանջվում է հասարակական կյանքի շատ ոլորտներում, և միշտ չէ, որ շրջանավարտների ձեռք բերած հմտությունները բավարարում են աշխատաշուկայի պահանջարկը: Ինչպես իրավացիորեն նշում է Ս. Տեր-Մինաստվան, այսօր օտար լեզվի յուրացումը դարձել է ավելի ֆունկցիոնալ. գիտության, մշակույթի, տեխնիկայի և մարդկային գործունեության այլ ոլորտների հազարավոր մասնագետների համար անհրաժեշտ է դարձել լեզվի՝ որպես աշխատանքային գործիքի յուրացումը: Օտար լեզուն, առաջին հերթին անգլերենը, նրանց պետք է գործառական առումով՝ այլ երկրների մարդկանց հետ հաղորդակցվելու համար (Օձ-Ի՝ èí ãññ àà 2000:33):

Օտար լեզվի դասավանդման հաղորդակցական մեթոդը

Այս առումով հաղորդակցական մեթոդը, որը մշակվել է արևմտյան երկրներում և այսօր հաջողությամբ կիրառվում է նաև Հայաստանում, ունի իր առավելությունները: Այստեղ լեզուն դիտվում է առաջին հերթին որպես հասարակական երևույթ՝ որպես հասարակության անդամների միջև հաղորդակցման միջոց: Այս մեթոդի հիմնական նպատակն է զարգացնել սովորողների հաղորդակցական հմտությունները, և հետևաբար՝ լեզվական գիտելիքներն ուսուցանվում են իրական հաղորդակցության պայմաններում: Եթե դասական մեթոդի հիմքում ընկած է հիմնականում լեզվի տեղեկատվական գործառույթը, ապա հաղորդակցական մեթոդի նպատակը լեզվի հաղորդակցական գործառույթի իրացման ապահովումն է: Այս իրողությամբ է բացատրվում լեզվական նյութի մատուցման բոլորովին այլ ձևերի կիրառումը: Օրինակ, փոխանակ ասելու «Past Simple ժամանակաձևը նշում է անցյալում պարբերաբար կատարվող գործողություն, անցյալում կատարված ավարտված գործողություն, պատմական իրադարձություններ» և այլն, դասախոսն ասում է. «Այսօր մենք խոսելու ենք այն մասին, թե ինչ եք արել անցյալում», կամ՝ «Փորձեք հարցնել ձեր ընկերներին, թե ինչով են զբաղվել երեկ»: Շատ կարևոր է իրադրային մոտեցումը քերականության դասավանդման մեջ (և ոչ միայն քերականության): Քերականությունը մատուցվում է ոչ թե որպես կանոնների մի ամբողջություն,

այլ կենդանի, գործածական կառույցների միջոցով: Այսպիսով քերականությունը «թաքցվում է» խոսակցական կաղապարների ետևում, նրան տրվում է զուտ հաղորդակցական ուղղվածություն: Ինչ վերաբերում է ընթերցանության և բառապաշարի ուսուցմանը, ապա սովորողներին առաջարկվող տեքստերը ծավալուն չեն: Սովորողների խնդիրը ոչ թե դրանք թարգմանելն ու վերլուծելն է, այլ՝ դրանց շուրջ խոսելը, կարծիք արտահայտելը, երկխոսություն վարելը: Բառապաշարն ամրաստվում է ոչ թե սերտելու, հոմանիշներ և հականիշներ գտնելու, այլ՝ հաղորդակցական կաղապարներ օգտագործելու միջոցով: Հիմնական շեշտը դրվում է խոսելու և ունկնդրելու հմտություններ ձևավորելու վրա: Հաղորդակցական մեթոդն, ըստ Ռիչարդսի և Ռոջերսի, հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա (Richards, Rodgers 1986:71):

- լեզուն իմաստ արտահայտելու համակարգ է,
- լեզվի առաջնային գործառույթը հաղորդակցական գործառույթն է,
- լեզվի կառուցվածքն արտացոլում է նրա գործառական և հաղորդակցական կիրառությունները,

-լեզվի առաջնային միավորները ոչ թե նրա քերականական և կառուցվածքային հատկանիշներն են, այլ հաղորդակցական և գործառական իմաստները խոսություն:

Ստերնը, նշելով հաղորդակցական մեթոդին հատուկ մի շարք այլ մոտեցումներ (ինչպես օրինակ՝ «Լեզուն խոսքն է», «Լեզուն սովորույթների ամբողջություն է», «Պետք է սովորեցնել լեզու, այլ ոչ թե զիտելիք լեզվի մասին» և այլն), հայտնում է այն կարծիքը, որ նշված մոտեցումները օտար լեզվի դասավանդումը «արվեստից վերածում են գիտության» (Stern 1983:158):

Փորձը ցույց է տալիս, որ հաղորդակցական մեթոդը, չնայած նրա՝ ինչ-որ չափով մակերեսային մոտեցումներին, իսկապես արդյունավետ է: Լեզուն կորցնում է իր կենսականությունը, երբ սովորողների առաջ դրված միակ նպատակը լեզվական միավորների յուրացումն է, հատկապես եթե հաշվի առնենք, որ տարբեր լեզուներում, ավելի ճիշտ՝ իրական հաղորդակցության մեջ, այդ միավորների կիրառությունը կարող է տարբեր լինել: Այսպես, օրինակ. հայ սովորողները հաճախ են օգտագործում *hero* բառը՝ նշելու համար գրական երկի կամ ֆիլմի հերոսի, քանի որ *hero - հերոս* զուգադրումը նրանց համար ամենամոտն է և հասկանալին: Մինչդեռ անգլախոս մշակույթում նշված իմաստով ընդունված է օգտագործել *character* բառը, որը հայ սովորողը կապում է բնավորություն իմաստի հետ:

Բերենք մեկ այլ օրինակ. հայ ուսանողը զիտի, որ *խնդիր* բառի անգլերեն համարժեքը *problem*-ն է: Այստեղից էլ «Ի՞նչ խնդիրներ են քննարկվելու այսօրվա ժողովին» նախադասությունը նա թարգմանում է “What problems are going to be discussed...”, չիմանալով, որ անգլերենում *problem* բառն ունի բա-

ցասական իմաստ (խնդիր՝ որպես դժվարություն). հետևաբար՝ այստեղ *խնդիր* բառը ճիշտ է թարգմանել որպես *issue*: Նման սխալների զգալի մասը մայրենիի Ազդեցության արդյունք է, և նրանցից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի խոսքը ճիշտ լինի ոչ միայն լեզվական, այլև՝ հաղորդակցական մակարդակում: Դասական մեթոդը, որով առաջնորդվում են օտար լեզու դասավանդողները և հաճախ՝ դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հեղինակները, սովորեցնում է լեզու (ճշգրիտ լինելու համար ասենք, որ՝ բավականին խոր և բազմակողմանի գիտելիքներ տալով), միչդեռ հաղորդակցական մեթոդն ապահովում է հաղորդակցական կարողությունների ձևավորում, որ պակաս կարևոր չէ ժամանակակից մասնագետի համար: Այլ բան է, որ բուհական ակադեմիական կրթության շրջանակներում հաղորդակցական մեթոդի և նրա վրա հիմնված դասագրքերի կիրառումը չեն կարող բավարար համարվել, և այս հարցին կանդիդատուհանք ստորև:

Այսօր օտար լեզվի դասավանդման մեջ մեծ նշանակություն է տրվում նաև լեզվամշակութաբանական մոտեցմանը, որը հիմնվում է ուսումնասիրվող լեզվի՝ համապատասխան հասարակական և մշակութային միջավայրի վրա: «Գիտատեխնիկական առաջընթացը հաղորդակցման նորանոր հնարավորություններ, ձևեր և տեսակներ է բացահայտում, որոնց արդյունավետության գլխավոր պայմանը փոխըմբռնումն է, մշակույթների երկխոսությունը... գործընկերների մշակույթի նկատմամբ հարգանքը» (Тер-Минасова 2000:17): Օտար լեզվի լիարժեք տիրապետման գործում առաջնային կարևորություն են ստանում մշակութաբանական հմտությունները, որոնց ձևավորման համար անհարաժեշտ է հասկանալ սովորողի մշակույթի և դասավանդվող լեզվի մշակույթի միջև գոյություն ունեցող ընդհանրություններն ու տարբերությունները: Այս հմտություններին տիրապետելը սովորողներին թույլ է տալիս հաղթահարել լեզվական և մշակութաբանական խոչնդոտները իրական հաղորդակցության մեջ: Այստեղ նորից կարևորվում է դասավանդողի՝ մայրենի լեզվի և երկու մշակույթների առանձնահատկությունների տիրապետման մակարդակը և այն, որ օտար լեզվի դասավանդման մեջ մայրենիի բացառումը չի կարող արդարացված լինել: Հընթացս նշենք, որ օտար լեզվի ուսուցման գործընթացում մայրենիից հրաժարվելը, որ ընկած է հաղորդակցական մեթոդի հիմքում, ունի իր բացատրությունը: Հաղորդակցական մեթոդը, ինչպես հայտնի է, մշակվել է անգլախոս երկրներում բնակվող օտարերկրացիներին անգլերեն սովորեցնելու համար: Քանի որ խմբերում սովորում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ, իսկ դասավանդողը հաճախ տիրապետում է միայն անգլերենին, ապա մայրենի լեզուն ինքնըստինքյան դուրս է մղվում դասավանդման գործընթացից: Սակայն մեր դեպքում օտար լեզվի դասավանդման մեջ մայրենիի դերը, կարծում ենք, դժվար է գերազանահատել:

Մեթոդների առավելություններն ու թերությունները

Վերը անդրադարձանք օտար լեզվի դասավանդման բազմաթիվ մեթոդներից երկուսին, որոնք առավել արդյունավետ և լայնորեն կիրառելի են: Սակայն պետք է նշել, որ նրանցից ոչ մեկը, առանձին վերցված, չի կարող բավարար լինել ժամանակակից մասնագետների պատրաստման համար: Փորձենք վերլուծել պատճառները:

Դասական՝ քերականական-թարգմանական մեթոդը, որքան էլ հիմնարար է, այսօր չի բավարարում օտար լեզվի իմացությանը ներկայացվող ժամանակակից պահանջները և աշխատաշուկայի պահանջարկը: Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ բարձր գնահատականներով բուհն ավարտած շրջանավարտներն աշխատանքի ընդունվելիս և բուն աշխատանքային գործընթացում լուրջ խնդիրներ են ունենում, քանի որ նրանց ստացած ակադեմիական գիտելիքները բավարար չեն ազատ հաղորդակցության համար: Մյուս կողմից՝ հաղորդակցական մեթոդի կիրառումը, որը կարծես լրացնում է այս բացը, ապահովում է ոչ այնքան խոր գիտելիքներ, որոնց, ըստ էության, պետք է տիրապետի մասնագետը: Ինչ վերաբերում է լեզվամշակութաբանական մեթոդին, ապա այն պետք է դիտարկել որպես լրացուցիչ, և ոչ թե՝ հիմնական մեթոդ: Կարծում ենք, որ այն ավելի շուտ մոտեցում է, քան մեթոդ: Այստեղ նշենք, որ լեզվամշակութաբանական մեթոդի կիրառումը չենք կապում «Երկրագիտություն» կամ «Մշակութաբանություն» առարկաների դասավանդման հետ, քանի որ դրանք, ինչպես հայտնի է, տեսական դասընթացներ են, որոնցում շեշտը դրվում է ուսումնասիրվող լեզվի երկրի պատմության, աշխարհագրության, մշակույթի վրա: Այս ամենն, անշուշտ, կարևոր է, սակայն սովորողներն այս դասընթացներից ձեռք չեն բերում առօրյա գործնական կամ անձնական շփումների համար անհրաժեշտ տարրական հմտություններ, օրինակ՝ ինչպես բարևել տարբեր իրադրություններում, հեռախոսազանգեր կատարել, շնորհակալություն հայտնել գրավոր կամ բանավոր ձևով, պաշտոնական և ոչ-պաշտոնական իրադրություններում, և այլն:

Վերը շարադրված նկատառումները մեզ թույլ են տալիս եզրակացնել հետևյալը. բուհում օտար լեզվի դասավանդման շրջանակներում նպատակահարմար է սովորողներին մատուցել ժամանակակից կյանքի ամենատարբեր ոլորտներին վերաբերող հակիրճ տեղեկատվական տեքստեր, շեշտը դնելով զանազան քննարկումների, երկխոսությունների վրա: Անգլիական և ամերիկյան դասական գրականությունից վերցված տեքստերը, որոնք լայնորեն օգտագործված են գրեթե բոլոր դասագրքերում, կարող են լավ նյութ հանդիսանալ տնային ընթերցանության համար, ապահովելով սովորողների ընդհանուր զարգացման մակարդակը և հարստացնելով նրանց բառապաշարը: Կարծում ենք, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող դասագրքերում

նպատակահարմար է ներառել այնպիսի տեքստեր, որոնք համալրված են կյանքի ամենատարբեր ոլորտներին վերաբերող ժամանակակից, գործուն բառապաշարով: Չիրաժարվելով դասական մոտեցումներից, անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն հատկացնել ունկնդրման և բանավոր խոսքի հմտությունների ձևավորմանը, որը ժամաքանակի սակավության, կամ երբեմն՝ տեխնիկական խնդիրների պատճառով, հաճախ բավարար ուշադրության չի արժանանում:

Նպատակահարմար է վերանայել նաև գործնական քերականության մատուցման եղանակը: Տեսական նյութը կարելի է մատուցել ոչ թե խրթին սահմանումների և կանոնների տեսքով, այլ՝ ավելի հակիրճ և ինֆորմատիվ ձևով: Ինչ վերաբերում է վարժություններին, դրանք մեծ մասամբ հիմնված են դասական մոտեցումների վրա և սովորողներին առաջարկում են նախադասության բաց թողնված տեղերը լրացնել այս կամ այն ժամանակաձևով, բացատրել այս կամ այն քերականական ձևի գործածությունը և այլն: Այսպիսով քերականության ուսուցումը դառնում է ինչ-որ չափով ինքնանպատակ. սովորողը, տեսական բաժնից սերտելով համապատասխան կանոնները, կատարում է վերը նշված վարժությունները, սակայն երբ խոսում է որևէ թեմայով, թույլ է տալիս քերականական սխալներ: Փորձը ցույց է տալիս, որ երբ դասախոսն ուղղում է սխալը, ուսանողն անմիջապես հիշում և ասում է համապատասխան կանոնը: Այսինքն՝ սովորողը քերականությունը գիտի կանոններով, սակայն օգտագործել դժվարանում է: Այստեղից հետևում է, որ քերականության դասավանդումը պետք է դառնա հնարավորինս հաղորդակցական: Վարժությունները պետք է լինեն իրադրային, դինամիկ և բազմազան: Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն հատկացնել շարահյուսությանը, որն անմիջականորեն կապվում է խոսքի հետ: Կարծում ենք, որ այս առումով նպատակահարմար կլինեն վերանայել ձևաբանությանը և շարահյուսությանը հատկացվող դասաժամերի բաշխումը: Բացի այդ, քերականական նյութը նպատակահարմար է մատուցել սովորողին հետաքրքրող բառային նյութի հիման վրա: Սովորողն ավելի լավ է մտապահում այն, ինչը բովանդակային առումով իրեն հետաքրքրել է:

Հատուկ կցանկանայինք անդրադառնալ վերը նշված՝ դասական մեթոդի թերություններից մեկին. դասապրոցեսում հիմնական հաղորդակցությունն իրականացվում է դասավանդողի և սովորողի/սովորողների միջև: Անհրաժեշտ է ապահովել սովորող-սովորող հաղորդակցություն, որ անմիջականորեն կապված է խոսքային իրադրությունների ստեղծման և ճիշտ օգտագործման հետ:

Եզրակացություն

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ բուհում օտար լեզվի դասավանդման համար նպատակահարմար է հիմնվել դասական մեթոդի վրա, որի անվիճելի առավելություններին անդրադարձանք վերը, սակայն այն հնարավորինս համարել հաղորդակցական մոտեցումներով, մշակել հաղորդակցական ուղղվածությամբ վարժությունների համակարգեր, հիմնվել ժամանակակից կյանքին վերաբերող տեքստերի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Harmer, J. (2010) *How to Teach English*. London, NY: Longman.
2. Johnson, K. (1982) *Communicative Syllabus Design and Methodology*. Oxford: Pergamon.
3. Larsen-Freeman, D. (1991) *An Introduction to Second Language Acquisition Research*. London, NY: Longman.
4. Mora, J. (2010) *Teaching Grammar in Context*. San Diego: San Diego University.
5. Stern, H.H. (1983) *Fundamental Concepts of Language Teaching*. Oxford: OUP.
6. Wilkins, D. (1978) *Functional Materials and the Classroom Teacher: Some Background Issues*. University of Reading: Centre of Applied Language Series.
7. Мурашев, О. *Девять методик изучения английского языка*. [Электронный ресурс] URL: < zillion.net/ru/blog > [дата обращения: Март 2016].
8. Тер-Минасова, С. (2000) *Язык и межкультурная коммуникация*. М.: Слово.

On Some Problems of Combining Methods of Teaching Foreign Languages

The article is an attempt to discuss the necessity of new approaches to teaching foreign languages. Nowadays specialists need not only profound knowledge, which is provided by the grammar-translation method, but also good communicative skills, as well as those of intercultural communication. But the academic teaching of foreign languages cannot be based on the communicative method only for a number of reasons. Hence, in the academic teaching of foreign languages it is necessary to combine the above-mentioned methods.

О некоторых проблемах преподавания иностранных языков в вузе

В статье рассматривается необходимость новых подходов к преподаванию иностранных языков в вузе. Сегодня перед специалистами иностранных языков поставлены новые задачи, что связано с современными социально-политическими, научно-техническими, культурными реалиями. Грамматико-переводческий метод, на протяжении многих десятилетий служивший основным методом преподавания, сегодня не вполне отвечает новым требованиям. С другой стороны, коммуникативный метод недостаточно основательный для академического образования. Отсюда возникает необходимость комбинирования методов и пересмотра подходов как к самому процессу преподавания, так и к учебным пособиям.